



**Նախագահ  
Դիտեր Ֆ. Ուխդորֆ**  
Առաջին Նախագահության  
Առաջին Խորհրդակալ

# Ծառ տնկելու լավագույն ժամանակը

**Հ**ին Հռոմում Յանուսը սկզբնավորության աստվածն էր: Նրան հաճախ նկարում էին երկու դեմքով՝ մեկը հետ նայելիս դեպի անցյալը, մյուսը առաջ նայելիս դեպի ապագան: Որոշ լեզուներ Հունվար ամիսն անվանում են նրա անվամբ, որովհետև տարվա սկիզբը համարվում էր մտածելու և ծրագրեր կազմելու ժամանակը:

Հազարավոր տարիներ անց, բազմաթիվ մշակույթներ ողջ աշխարհում շարունակում են նոր տարում որոշումներ ընդունելու ավանդույթը: Իհարկե, որոշումներ կայացնելը հեշտ է, դրանք իրականացնելն ամենևին այլ բան է:

Մի մարդ, ով Ամանորյա որոշումների մի երկար ցուցակ էր կազմել, բավականին գոհ էր իր առաջընթացով: Նա մտածում էր. «Մինչև հիմա չեմ շեղվել իմ դիետայից, հավասարակշռությունս չեմ կորցրել, հետևել եմ իմ բյուջեին և երբևէ չեմ բողոքել հարևանի շան համար: Բայց այսօր հունվարի երկուսն է, և զարթեցուցիչը հենց նոր հնչեց: Ժամանակն է, որ անկողնուց վեր կենամ: Հրաշք կլինի բնավորության այս գիծը պահելը»:

## Նորից սկսել

Մի աներևակայելիորեն հուսադրող բան կա նոր սկզբի մեջ: Կարծում եմ, եղել է պահ, երբ մենք բոլորս ցանկացել ենք նորից սկսել մաքուր էջից:

Ինձ դուր է գալիս մաքուր կոշտ սկավառակ ունեցող նոր համակարգիչ ստանալը: Որոշ ժամանակ այն կատարելապես է աշխատում: Բայց մինչ օրերն ու շաբաթներն անցնում են, և ավելի ու ավելի շատ ծրագրեր են տեղադրվում (մի քանիսը միտումնավոր, մյուսները՝ ոչ այդքան), վերջիվերջո, համակարգիչը սկսում է ծանրանալ, և այն, ինչ սովորաբար արագ և արդյունավետ էր անում, դառնում է դանդաղ: Երբեմն այն չի աշխատում բոլորովին: Նույնիսկ այն միացնելը կարող է խնդիր դառնալ, քանի որ կոշտ սկավառակը աղտոտվում է տարատեսակ քաոսից և էլեկտրոնային աղբից: Լինում են պահեր, երբ միակ ապավենը լինում է վերածնաչափելը համակարգիչը և նորից սկսելը:

Մարդկային էակները նույն կերպով կարող են աղտոտվել վախից, կասկածներից և ծանր մեղքից: Մխայները, որ մենք արել ենք (կամա, թե ակամա), կարող են ծանրանալ մեզ վրա մինչև այն պահը, երբ դժվար է թվում անել այն, ինչ գիտենք, որ պետք է անենք:

Մեղքի դեպքում կա մի հիանալի վերածնաչափման գործընթաց՝ ապաշխարություն անվանումով, որը մեզ թույլ է տալիս մաքրել մեր ներսի կոշտ սկավառակներն այն աղտոտումից, որը ծանրացնում էր մեր սրտերը: Հիսուս Քրիստոսի հրաշալի և կարեկցող Քավության միջոցով ավետարանը մեզ ցույց

է տալիս մեր հոգիները մեղքի բծերից մաքրելու և մեկ անգամ ևս նորացվելու, մաքուր, ինչպես անմեղ երեխա դառնալու ճանապարհը:

Սակայն, երբեմն մնացած բաները մեզ դանդաղեցնում են և հետ են պահում՝ առաջացնելով անարդյունավետ մտքեր ու գործողություններ, որոնք դժվարացնում են սկսելու գործընթացը:

### **Հայտնաբերել լավագույնը, որ կա մեր մեջ**

Նպատակներ սահմանելն արժեքավոր նախաձեռնություն է: Մենք գիտենք, որ մեր Երկնային Հայրն ունի նպատակներ, որովհետև Նա ասել է մեզ, որ Իր գործն ու փառքն է՝ «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Մեր անձնական նպատակները կարող են հայտնաբերել լավագույնը, որ կա մեր մեջ: Սակայն մի բան, որը շեղում է մեր ջանքերը որոշումներ կայացնելիս և իրականացնելիս, դա հապաղելն է: Մենք երբեմն ուշացնում ենք սկսելը՝ սպասելով ճիշտ պահին՝ նոր տարվա առաջին օրվան, ամռան սկզբին, երբ մենք կկանչվենք որպես եպիսկոպոս կամ Սփոփող Միության նախագահ, երբ երեխաները դպրոց կգնան, երբ մենք թոշակի կանցնենք:

Ձեր արդար նապատակների ուղղությամբ շարժվելու համար հրավերքի կարիք չունենք: Պետք չէ սպասել թույլտվության, որպեսզի դառնաք այն անձնավորությունը, որը նախատեսված էք դառնալ: Պետք չէ սպասել հրավերի, որպեսզի ծառայեք Եկեղեցում:

Երբեմն մենք կարող ենք վատնել մեր կյանքի տարիները՝ սպասելով, թե երբ կընտրվենք (տես Վևու 121.34–36): Բայց դա կեղծ նախադրյալ է: Դուք արդեն ընտրված եք:

Երբեմն իմ կյանքում ես անքուն գիշերներ եմ անցկացրել՝ աշխատելով հաղթահարել խնդիրներ, անհանգստություններ կամ անձնական վշտեր: Բայց որքան էլ մութ լինի գիշերը, հետևյալ միտքն ինձ միշտ խրախուսում է. առավոտյան արևը կբարձրանա:

Ամեն նոր օրվա հետ նոր արշալույս է գալիս ոչ միայն երկրի համար, այլ նաև մեզ համար: Եվ նոր օրվա հետ գալիս է նոր սկիզբ՝ կրկին սկսելու հնարավորություն:

### **Ի՞նչ կլինի, եթե ձախողվենք:**

Երբեմն վախն է, որ մեզ հետ է պահում: Մենք, գուցե, վախենանք, որ մեզ չի հաջողվի հաջողության հասնել, որ մենք գուցե շփոթվենք, որ հաջողությունը, գուցե, մեզ փոխի, կամ գուցե այն փոխի մարդկանց, ում սիրում ենք:

Եվ այսպիսով, մենք սպասում ենք: Կամ հանձնվում:

Եվս մեկ բան, որ պետք է հիշենք նպատակներ սահմանելիս՝ մենք անկասկած կսխալվենք կարճ ժամանակահատվածում: Բայց հուսահատվելու փոխարեն մենք կարող ենք ուժեղանալ, որովհետև այս հասկացողությունը հեռացնում է հենց այս պահին կատարյալ լինելու ճնշումը: Այն, ի սկզբանե, ընդունում է, որ կլինի ժամանակ, որ մենք կձախողվենք: Հենց սկզբից սա գիտենալը հեռացնում է ձախողման զարմանքն ու հուսահատությունը:

Երբ մենք մոտենում ենք մեր նպատակներին այս ձևով, ձախողումը մեզ չի սահմանափակում: Հիշե՛ք, նույնիսկ, եթե մենք չկարողանանք անմիջապես հասնել մեր ամենակարևոր, ամենացանկալի նպատակին, մենք կունենանք առաջընթաց այն ճանապարհին, որը տանում է դեպի դրան:

Եվ դա էական է. դա շատ բան է նշանակում:

Նույնիսկ, եթե մենք ձախողվենք՝ շատ մոտ լինելով ավարտի եզրագծին, ճանապարհը շարունակելը մեզ ավելի կբարձրացնի, քան մենք նախկինում էինք:

### **Սկսելու լավագույն ժամանակը հիմա է**

Հին ասացվածքն ասում է, «Ծառ տնկելու լավագույն ժամանակը 20 տարի առաջ էր: Երկրորդ լավագույն ժամանակը հիմա է»:

Մի հետաքրքիր ու հուսադրող բան կա *հիմա* բառի հետ կապված: Մի գորացնող բան կա այն փաստի մեջ, որ եթե մենք ընտրենք որոշել հիմա, մենք կարող ենք առաջ շարժվել հենց այս պահին:

*Հիմա* լավագույն ժամանակն է սկսել դառնալ այն անձնավորությունը, որ վերջիվերջո, ուզում ենք դառնալ. ոչ միայն այս պահից սկսած 20 տարի շարունակ, այլ նաև ողջ հավերժության համար:

## ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Ուիլյամսը բացատրեց, որ երբ մենք ձախողվում ենք հասնել մեր նպատակներին, «մենք ուժեղանում ենք: . . . Նույնիսկ եթե մենք ձախողվենք՝ շատ մոտ լինելով ավարտի եզրագծին, ճանապարհը շարունակելը մեզ ավելի կբարձրացնի, քան մենք նախկինում էինք»: Խնդրեք ընտանիքի անդամներին կիսվել փորձառություններով, երբ նրանք ավելի շատ են սովորել ընթացքից, քան ստացված արդյունքից, ինչպես օրինակ դպրոցն ավարտելիս կամ ինչ-որ պարզև ստանալիս:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

### Դարձեք ինքներդ ձեր լավագույն եսը՝ սկսելով հիմա

Նախագահ Ուիլյամսը ուսուցանում է, որ «անձնական նպատակները կարող են մեր մեջ

զարգացնել լավագույնը»: Սահմանեք մի քանի նպատակ ձեր կյանքի երկու կամ երեք ոլորտներում, օրինակ, ֆիզիկական առողջության, հոգևոր առողջության և ընկերության: Ինչպիսի՞ հաջողություններ կուզենայիք ունենալ այս ոլորտներում այս տարի: Մինչ աղոթքով կխորհեք մի քանի նպատակների մասին, հավաստիացեք, որ դրանք հասանելի են, սակայն պահանջում են ձեզանից աճել: Սուրբ գրությունների ուսումնասիրման ձեր օրագրում մանրամասն նկարագրեք ձեր նպատակներն այնպես, որպեսզի կարողանաք տեսնել ձեր առաջընթացը մեկ տարին լրանալիս:



# Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Օրինակ

*Սղոթքով ուսումնասիրե՛ք այս կրոթքը և ձգտե՛ք հասկանալ, թե ինչով կիսալե՛ք: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքի ու առաքելության մասին հասկացողությունը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրհնել նրանց, ում մասին հոգ եք տանում այցելությանը ուսուցանման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար, այցելե՛ք [reliefsociety.lds.org](http://reliefsociety.lds.org):*

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

*Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որ նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:*

Երբ մենք հասկանում ենք, որ Հիսուս Քրիստոսը մեր օրինակն է բոլոր բաներում, մենք կարողանում ենք մեծացնել Նրան հետևելու մեր ցանկությունը: Սուրբ գրությունները լի են Քրիստոսի ուսնահետքերին հետևելու մեզ ուղղված խրախուսանքով: Քրիստոսն ասաց Նեփիացիներին, «Քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դո՛ւք անեք» (3 Նեփի 27.21): Թովմասին Հիսուսն ասել է. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ով չի գալիս Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհաննես ԺԴ.6):

Այսօր մեր առաջնորդները մեզ հիշեցնում են դարձնել Փրկչին մեր օրինակը: Լինդա Ք. Բրրթընը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, ասել է. «Երբ մեզանից յուրաքանչյուրն ունենա Քավության վարդապետությունը գրված մեր սրտերում, ապա մենք կդառնանք այնպիսի ժողովուրդ, ինչպիսին Տերն է կամենում, որ լինենք»:<sup>1</sup>

Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնն ասել է. «Մեր Տերն ու Փրկիչը, Հիսուս Քրիստոսը, մեր Օրինակն ու մեր գործությունն է»:<sup>2</sup>

Եկեք որոշենք մոտենալ Հիսուս Քրիստոսին, հնազանդվել Նրա պատվիրաններին, և ձգտել վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ:

## Սուրբ գրություններից

2 Նեփի 31.16; Ավա 17.11;

3 Նեփի 27.27; Մորոնի 7.48

## Մեր պատմությունից

«Նա նշեց ճանապարհը և առաջնորդեց», - գրել է Էլիզա Ռ. Մոնուն՝ Սփոփող Միության Երկրորդ գերագույն նախագահը Հիսուս Քրիստոսի մահկանացու ծառայության մասին:<sup>3</sup> Նա մեկ առ մեկ ծառայում էր մարդկանց: Նա ուսուցանում էր, որ մենք պետք է թողնենք իննսունինին, որպեսզի փրկենք մոլորված մեկին (տես Ղուկաս 15.3-7): Նա բուժում և ուսուցանում էր մարդկանց՝ նույնիսկ 2500 հոգուց բաղկացած ամբոխի մեջ ժամանակ տրամադրելով յուրաքանչյուր անձի (տես 3 Նեփի 11.13-15; 17.25):

Վերջին Օրերի Սուրբ կանանց մասին Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականն, ասել է. «Դուք, հիանալի քույրեր, մարդկանց մատուցում եք կարեկցանքով լի ծառայություն այնպիսի նկատառումներով, որոնք գերազանցում են անձնական օգուտի միտումները: Սրանով դուք նմանվում եք Փրկչին: . . . Նրա մտքերը միշտ այն մասին էին, թե ինչպես օգնել ուրիշներին»:<sup>4</sup>

## ՀՂՈՒՄՆԵՐ

1. Լինդա Վ. Բրրթըն, «Սրբոյր Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքը գրված է մեր սրտերում», *Ensign* կամ *Լիստոնուս*, Նոյ. 2012, 114:
2. Թոմաս Մ. Մոնսոն, «Կյանքի դժվարություններին հանդիպելիս», *Ensign*, Նոյ. 1993, 71:
3. «Որքան մեծ է իմաստությունն ու սերը՝ Հիսուսին, համար 195:
4. Դիտեր Ֆ. Ուլսդորֆ, «Երջանկություն՝ ձեր ծառայությունը», *Ensign* կամ *Լիստոնուս*, նոյ. 2008, 120:

## Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչո՞ւ և ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսն ինձ համար օրինակ հանդիսանում:
2. Ինչպե՞ս կարող եմ քույրերին ծառայել, ում ես այցելում եմ, օգնել ինձ հետևել Քրիստոսին: